

Երեսնամյա այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնությունը շնորհավորեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ծննդյան տարեդարձի առիթով



Օգոստոսի 21-ին, Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան տարեդարձի առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսները, հայաստանյան թեմերի առաջնորդներն ու առաջնորդական տեղապահները, միաբանության ան-

դամները, քահանաներն ու պաշտոնությունը այցելեցին Ամենայն Հայոց Հայրապետին: Եկեղեցականներն ու աշխարհականներն իրենց ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները փոխանցեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Վերջիններս հայցեցին ամենագոր Աստծու օգնականությունը Հայոց Հովվապետին՝

իր եկեղեցանվեր եւ ազգօգուտ հոգեւոր առաքելության իրականացման համար, մաղթեցին երկար տարիների արդյունավոր հովվապետություն՝ ի պայծառություն եւ ի շինություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ազգային եւ հայրենական կյանքի:

Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով ջերմ խոսքերի եւ շնորհավորանքների համար, իր փոխադարձ մաղթանքներն ուղղեց ամենքին: Նորին Սրբությունը բարձր գնահատեց եկեղեցականների եւ Մայր Աթոռի պաշտոնության՝ ազգին եւ եկեղեցուն մատուցող անսակարկ ծառայությունը եւ անուրանալի ներդրումն ազգային-հոգեւոր կյանքի զորացման գործում: Սուրբ Էջմիածնի կողմից արձանագրած ձեռքբերումները նկատելով աննկուն հավատքի, միասնական համատեղ ջանքերի եւ նախաձեռնողի ու համընթաց ոգու պտուղը:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

23 օգոստոսի Նորած քահանաներին



Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հուլիսի 7-ին քահանայական կոչմանն արժանացած եւ Մայր Աթոռում քառասնօրյա պատրաստության շրջանն անցած նորած տասներկու քահանաներին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովհաննես Գալստյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց նորընծա քահանաներին՝ հավաստիացնելով, որ նրանք պատրաստ են իրենց նվիրյալ հովվական ծառայությունը բերելու Հայոց եկեղեցու անդաստանում:

Ձրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց քահանա հայրերին՝ հովվական ծառայության կոչվելու առիթով՝ նրանց փոխանցելով հայրական իր պատգամներն ու խրատները: Նորին Սրբությունն ընդգծեց, որ արդյունավոր եւ բարեհաջող սպասավորության երաշխիքը եկեղեցու զավակների նկատմամբ հոգեւորականի ունեցած սերն է, հովվական խնամքը, պատասխանատվությունն ու անվերապահ նվիրումն իրեն վստահված համայնքի հանդեպ: Հայոց Հովվապետը նորած քահանաներին հորդորեց չընկճվել հովվական կյանքում համ-

դիպող դժվարություններից եւ խնդիրներից, այլ հավատքով առ Աստված, խոհեմությամբ եւ համբերատարությամբ հաղթահարել դրանք՝ արգասաբեր դարձնելով հոգեւոր սպասավորությունն իրենց վստահված համայնքներում: Վեհափառ Հայրապետը պատգամեց ամուր մնալ իրենց կոչման մեջ եւ համընթաց ոգով, աստվածասեր, բարեպաշտ եւ հայրենամեկ ծառայությամբ էլ ավելի բարձրացնել Հայոց եկեղեցու բարի համբավն ու հեղինակությունը: Երիտասարդ եկեղեցականներին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց Աստծու օգնակա-

նությամբ եւ առաջնորդությամբ արդյունավորել իրենց առաքելությունը՝ ի պայծառություն Առաքելական Մայր Եկեղեցու եւ ի բարօրություն հայ ժողովրդի: Համդիպման վերջում Հայոց Հովվապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց քահանաներին եւ նրանց ընծայեց ձեռագ խաչեր եւ ս. Հաղորդության մասնատուփեր: Առաջիկա օրերին քահանա հայրերը Նորին Սրբության օրհնությամբ ծառայության կկոչվեն Հայոց եկեղեցու տարբեր կառույցներում եւ աշխարհասփյուռ թեմերում:

25 օգոստոսի Լիբանանի էջմիածնասեր տիկնանց միության անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում հյուրընկալեց Լիբանանի էջմիածնասեր տիկնանց միության շուրջ 40 անդամների: Համդիպման սկզբում միության ատենապետուհի Անահիտ Տանձիկյանը միության անդամների անունից երախտագիտություն հայտնեց Նորին Սրբությանը՝ միության 60-ամյակի առթիվ Մայր Աթոռի հարկից ներս իրենց հյուրընկալելու համար եւ ճշեց, որ Սուրբ Էջմիածին այցելելու նման հրավերը միության վաթսուամյա գործունեության լավագույն գնահատականն է: Տիկին Տանձիկյանը միության անդամներին ներկայացրեց Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին իրականացված բազմաթիվ ծրագրերն ու նախաձեռնությունները, անդրադարձ կատարեց նաեւ միության գործունեությանն ու առաքելությանը: Ապա ներկաներին ողջունեց եւ միության հիմ-

նադրման 60-ամյակի կապակցությամբ իր շնորհավորանքները բերեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը ճշեց, որ Հայոց ցեղասպանության եւ խորհրդային տարիների անաստվածության հետեւանքով Մայր Աթոռին պատճառված վերքերի դարմանման գործում իր մեծ դերն ու աջակցությունն է ունեցել Լիբանանի էջմիածնասեր տիկնանց միությունը, ինչը վկայում է համայն հայության հոգեւոր կենտրոնի հանդեպ ունեցած մեծ սիրո ու նվիրման մասին: Ընդգծելով միության շարունակվող կարեւոր առաքելությունը՝ Հայոց Հայրապետն իր մասնավոր գնահատանքն ու օրհնությունը բերեց Տանձիկյան ընտանիքին եւ միության անդամներին՝ իրենց նախաձեռնողի աշխատանքի եւ մշտական գորակցության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Լիբանանի էջմիածնասեր տիկնանց միության անդամներին

Սկիզբը՝ էջ 1

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ վաթսուամյա հորեյանը, ինչպես նաև ընտանիք-ներով հանդերձ այս այցելությունը Հայաստան, հոգեպես նորոգվելու, լիցքավորվելու և հայրենիքից նոր ուժ ստանալու առիթ կդառնա միության

հետագա գործունեության համար: Վեհափառ Հայրապետը նաև պատասխանեց միության անդամների հարցերին՝ մասնավորապես անդրադառնալով Միածնաէջ Մայր տաճարի ամրակայման ու հիմնանորոգության աշխատանքների ընթացքին:

Լիբանանի ՍԳՀՀ «Սարգիս Տիրունի» երիտասարդական միության անդամներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության «Սարգիս Տիրունի» ռասանողական երիտասարդական միության 35 անդամների, որոնք ուխտավորաբար եկել են այցելելու Հայաստան և Արցախ:

Միության ատենապետ Տիգրան Միրանյանը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը հայրական օրհնության համար՝ պատրաստակամություն հայտնելով մշտապես օգտակար լինելու Հայաստանին և Արցախին: Տ. Միրանյանը միության անունից նաև բարեմաղթանքներ հղեց Վեհափառ Հայրապետին՝ ծննդյան տարեդարձի կապակցությամբ:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց երիտասարդներին՝ ողջունելով միության անդամներին հայրենիք առաջնորդելու նախաձեռնությունը: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ նման այցելությունները հնարավորություն են ընձեռնում ճանաչելու այն բոլոր արժեքներն ու սրբությունները, որոնք կերտել է մեր ազգը, որոնցով ներշնչվել է ժո-

ղովուրդը՝ հավելելով, որ դրանց պահպանման և հաջորդ սերունդներին փոխանցման պատասխանատվությունը դրված է յուրաքանչյուր հայորդու վրա: Այս առումով Նորին Սրբությունը կարեւորեց աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականությունը:

Ամենայն Հայոց Հայրապետն իր ուրախությունը հայտնեց նաև երիտասարդների հայրենասիրական ոգու համար՝ հորդորելով առավել մեծ սիրով և ազգային կյանքում լիարժեք ներգրավվածությամբ շարունակել ազգային արժեքների ամխաթար պահպանման և փոխանցման իրենց նախնիների գործը:

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ այցը Հայաստան և համայն հայության հոգեւոր կենտրոն մոր լիցքեր կհաղորդի երիտասարդներին՝ վերափոխելով նաև հայրենական կյանքի վերաբերյալ նրանց ընկալումները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաև միության անդամների հարցերին, որոնք վերաբերում էին տարբեր ոլորտներում Մայր Աթոռի գործունեությանը:

միության ճանաչման և դատապարտման բանաձեռի որոշման կարեւորությունը՝ հետագայում մարդկային կյանքում մեծ ուժերի կանխարգելման առումով:

Նորին Սրբությունն իր խոսքում Շվեդիայի Թագավորության խորհրդարանի նախագահին ներկայացրեց նաև Շվեդիայի հայ համայնքի եկեղեցական կյանքը՝ շնորհակալություն հայտնելով համայնքի հոգեւոր-ազգային կյանքի ամիրա-ծեշտ պայմանների ապահովման համար:

Իր հերթին տիար Անդրեաս Նորլենը մշեց, որ ծանոթ է հայ ժողովրդի հարուստ պատմությանը,

նրա անդրադարձավ Հայաստան պատվիրակության այցի նպատակներին և սպասելիքներին: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև հայ ժողովրդի դավանած քրիստոնեական արժեքներին, Հայաստանում տեղ գտնող բարեփոխումներին, ժողովրդավարության արժեքներին և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատվիրակությանը մաղթեց առաքելության բարի արդյունավորում:

27 օգոստոսի

«Ֆրեսկո» միջազգային փառատոնի հյուրերին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Մայր Աթոռի հովանու ներքո անցկացվող «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգեւոր ֆիլմերի միջազգային փառատոնի հյուրերին, կազմակերպիչներին և կամավորներին:

Հայցելով Նորին Սրբության օրհնությունը՝ փառատոնի համահիմնադիր Ամեն Կարապետյանն անդրադարձավ փառատոնի շրջանակներում տեղի ունեցած միջոցառումներին և դրանց շուրջ դրական արձագանքին, ապա ներկայացրեց փառատոնի պատվավոր հյուրերին և մասնակիցներին՝ շեշտելով, որ կամավորական աշխատանքներում այս տարի ներգրավվել են բազում երիտասարդներ, այդ թվում նաև՝ հարբերդի մանկատան սաները: Փառատոնի աշխատանքներին անդրադարձավ նաև Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման պատասխանատու Թովմա վարդապետ խաչատրյանը:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայներին բաշխեց իր հայրական օրհնությունը: Հայոց Հայրապետն իր մասնավոր ուրախությունը հայտնեց, որ փառատոնը տարեցտարի ավելի մեծ ճանաչում է ընդգրկում է ձեռք բերում՝ գրավելով երիտասարդների հետաքրքրությունն ու ընդլայնելով նրանց ներգրավվածությունը կազմակերպչական աշխատանքներում: Նորին Սրբությունը ցավով արձանագրեց, որ ներկա ժամանակներում, մարդկության առջև ծառացած տարբեր մար-

տահրավերների պատճառով, հոգեւոր արժեքները երբեմն մոռանալ են ապրում, ուստի առավել կարևոր է արդիական են դառնում բարոյական, հոգեւոր արժեքների քարոզմանն ու տարածմանն ուղղված նմանատիպ նախաձեռնությունները: Այս իմաստով Վեհափառ Հայրապետը կարեւոր նկատեց «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգեւոր ֆիլմերի միջազգային փառատոնի և Մայր Աթոռի միջև ձեւավորված համագործակցությունը:

Գարեգին Երկրորդ Հայրապետը բարձր գնահատեց նաև ընդհանուր եկեղեցիների հոգեւորականների մասնակցությունը փառատոնին՝ ընդգծելով ներկա ժամանակաշրջանում ջանքերի մեկտեղման և նման միջոցառումների քաջալերման ու խրախուսման անհրաժեշտությունը: Սրանք գալիս են հանրության կյանքում ամրապնդելու հոգեւոր, արվեստի միջոցով հասարակության ուշադրությունը հրավիրելու բարոյական, հոգեւոր արժեքներին:

Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ փառատոնը կշարունակի իր աստվածահաճո գործունեությունը և դրական արձագանքների կարծանաճաթ թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանի սահմաններից դուրս:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց փառատոնի կազմակերպիչներին ու կամավորներին՝ հայցելով, որ Տերն օրհնի և արդյունավորի նրանց հանրօգուտ ջանքերը:

28 օգոստոսի

ՀՀ-ում Իրանի դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադինին:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց դեսպանին Հայաստանում իրականացրած առաքելության համար՝ գնահատելով ծառայության ընթացքում Հայաստանի, հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու հանդեպ դրսևորած նրա ջերմ վերաբերմունքը: Նորին Սրբությունն անդրադարձավ երկու ժողովուրդների պատմական կապերին, ինչպես նաև Մայր Աթոռի և Իրանի դեսպանատան միջև ձեւավորված համագործակցությանը:

Շնորհակալություն հայտնելով գնահատանքի խոսքերի համար՝ պրն Սեյեդ Քազեմ Սաջադին Նորին Սրբությանը ներկայացրեց Հայաստա-

նում իր քառամյա ծառայության արդյունքներն ու ձեռքբերումները:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը և դեսպանը անդրադարձան մարդկային կյանքում հոգեւոր, բարոյական արժեքների համահարթեցման, հոգեւոր արժեքների խթանման վտանգներին: Առկա մարտահրավերների հաղթահարման գործում կարեւորվեց կրոնների դերակատարությունը և կրոնական կառույցների ջանքերի մեկտեղումը: Ընդգծվեց, որ հոգեւոր, բարոյական արժեքների գործադրումով է միայն հնարավոր դիմագրավել բոլոր փորձությունները և ավելի բարի, ապահով ու խաղաղ դարձնել աշխարհը: Խոսվեց նաև Իրանի հայ համայնքի հոգեւոր կյանքի մասին:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը դեսպանին մաղթեց նորանոր հաջողություններ հետագա գործունեության մեջ:

27 օգոստոսի

Շվեդիայի Թագավորության խորհրդարանի պատվիրակությանը



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Շվեդիայի Թագավորության խորհրդարանի նախագահ Անդրեաս Նորլենի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Լեւո Նազարյանի և երկու երկրների դեսպանների:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գո-

հունակությամբ արձանագրեց, որ երկու երկրների միջև հարաբերությունները սերտանում են՝ նպաստելով փոխգործակցության զարգացմանը: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց Շվեդիայի Թագավորությանը Հայաստանին ցուցաբերվող գորակցության համար՝ մասնավորապես անդրադառնալով նաև խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպա-

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

29 օգոստոսի

ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների համաժողովի մասնակիցներին



Սկիզբը՝ էջ 1-2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների ամենամյա համաժողովի մասնակիցներին՝ առաջնորդությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի։

Իր խոսքում ՀՀ ԱԳ նախարարն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց համաժողովի աշխատանքների ընթացքը՝ անդրադառնալով ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններին։ Պրն Մնացականյանը մասնավորապես նշեց, որ որդեգրված արտաքին քաղաքականության սկզբունքների հիմքում ընկած են ազգային արժեքներն ու Հայաստանի շահերը։

Այս ենթատեքստում նախարարը հատուկ անդրադարձավ նաեւ Հայոց Եկեղեցու դերին՝ գոհունակությամբ ընդգծելով այն սերտ համագործակցությունը, որ առկա է նախարարության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջև։

Այնուհետեւ դիվանագետներին իր հայրապետական օրհնությունն ու պատգամը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

«Գոհունակություն է Հայրապետիս համար, որ հերթական անգամ համախմբվել եք հայրենիքում՝ քննարկելու մեր երկրի արտաքին քաղաքականության հիմնախնդիրները և ուղենշելու այն ճանապարհները, որոնք առավել արդյունավորությամբ պիտի նպաստեն մեր երկրի զորացմանն ու առաջընթացին։ Մենք է

այն պատասխանատվությունը, որ կրում եք ձեր ուսերին։ Ձեզ է վստահված տարբեր երկրներում ու միջազգային հարթակներում մեր երկիրը ներկայացնելու կարևոր առաքելությունը, որն իր արդյունքներով ամփոփվածորեն առնչվում է Հայաստանի վարկի ու հեղինակության, մեր հայրենիքի անվտանգության, մեր ժողովրդի բարօր ու ապահով կյանքի տեսլականի հետ։ Մենապես զնահատում ենք մեր երկրին ու ժողովրդին մատուցած ձեր նվիրյալ ծառայությունը և բերում ձեզ Մեր օրհնությունը՝ մաղթելով ուժ, եռանդ և նոր հաջողություններ ձեր հայրենանվեր գործունեության մեջ։

Խիստ խորհրդանշական ենք համարում անցկացվող համաժողովի շրջանակներում ձեր այցելությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդի հոգեւոր նվիրական կենտրոն։ Հայոց Եկեղեցին հոգեւոր իր առաքելությամբ զուգընթաց շատ հաճախ ստանձնել է նաեւ քաղաքական պատասխանատվություն մեր ժողովրդի կյանքում։ Մեր պատմության ընթացքում թե՛ պետականության գոյության և թե՛ բացակայության պայմաններում Հայ Եկեղեցին ներգրավված է եղել հայրենիքի առջեւ ծառացած ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական հիմնախնդիրների լուծման գործում՝ կոչմանը հավատարիմ իր հեղինակությունն ու կարողությունները ծառայեցնելով հայրենիքի և ազգի շահերին։ Պատմությունն առատ է վկայություններով, որոնք մեզ են փոխանցում հանուն երկրի ու ժողովրդի ապահովության՝ իրենց անձնուրաց ծառայությունը մատուցած նշանավոր եկեղեցականների անուններ։ Մեր Եկեղեցու հովանու ներքո է կերտվել ու խնամվել ազատագրական պայքարի ոգին, մարմին առել ազգային իղծերի իրականացման տեսիլքները, սերմնե սերունդ փոխանցել հայոց անկախ պետականության վերակերտման և ազատատենչության աննկուն կամքը։

Այսօր էլ մեր Եկեղեցին չի կարող անտաբերել և անհաղորդ մնալ մեր երկրի ու ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերներին, որոնք չափազանց մեծ կարեւորություն ու ընդգրկում ունեն և պահանջում են առավել մեծ ուշադրություն և ուժերի համախմբում»,- նշեց Վեհափառ Հայրապետը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ պետության, Եկեղեցու և համազգային կառույցների ներդաշնակ գործակցությունը մենք ենք և պարունակում բազմաթիվ խնդիրների ու հիմնահարցերի լուծման, մասնավորապես՝ դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացներում։ Այս առումով Նորին Սրբությունը էական համարեց, որ պետության առաջնահերթություններին եւ արտաքին քաղաքական գերակայությունների սահմանումներում նկատի առնվեն համահայկական կառույցների օրակարգերը, ինչը հնարավորություն կընձեռնի ձեւավորելու նաեւ արտաքին քաղաքական առաջնահերթությունների համազգային օրակարգը։

Նորին Սրբությունը անդրադարձ կատարեց համընդհանուր ջանքերի կարոտ մի շարք խնդիրների, որոնց թվում է տարբեր երկրներում հայկական ժառանգության պահպանմանը։ «Կարևոր խնդիր է նաեւ աշխարհով մեկ սփռված եկեղեցական և ազգային մշակութային ժառանգության խնամատարությունը։ Մենք ուրախ ենք մշելու, որ այս ուղղությամբ միասնական ջանքերով կատարվել է մեծ աշխատանք, հարկ է, որ այն նախանձախնդրորեն շարունակենք՝ հետամուտ լինելով մեր ժառանգության անխաթար պահպանությանը։ Արտերկրում մեր մշակութային մատուցներն ու սրբավայրերը յուրահատուկ և անփոխարինելի այցեքարտերն են մեր ժողովրդի, որոնց պատշաճ ներկայացումը էլ խնամքը նոր գրավչություն և առավել ընդարձակ ճանաչողություն կապահովի մեր երկրի համար»,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ հայրերի հավատքով զորացած մեկնեն իրենց ծառայության վայրերը՝ առավել խանդավառությամբ ու արդյունավորությամբ իրագործելու իրենց առաքելությունը ի նպաստ մեր ժողովրդի և մեր երկրի բարօրության ու առաջընթացի։

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը պատասխանեց ներկայների հարցերին, քննարկեցին նաեւ Եկեղեցու և Արտաքին գործերի նախարարության և, ի մասնավոր, օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միջեւ առկա գործակցության զարգացման հեռանկարները։

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



համար էլ Վերափոխման տոնը Հայ Եկեղեցում նշվում է ինն օր շարունակ»։

Վազգեն Եպիսկոպոսը նաեւ հատկանշական համարեց, որ վերափոխման սուրբ պատմությունը յուրօրինակ դաստիարակչական նշանակություն ունի ընտանեկան կյանքում, ծնողների և զավակների փոխհարաբերություններում՝ հաղորդելով մայրական սեր ու գուրգուրանք, հավատարմություն և սրբություն, պատասխանատվություն, երախտագիտություն ու խոնարհում։

Սրբազան հայրն անդրադարձավ նաեւ Հայոց Եկեղեցում կատարվող խաղողօրհներհ նշանակությանն ու ավանդույթին՝ ի մասնավորի հաստատելով. «Հիսուսն Ավետարանում որպես որթատունկ է ներկայացվում, իսկ գինին՝ Տիրոջ արյունը՝ Սուրբ Հաղորդության խորհրդի համար։ Այսօր օրհնվում են դաշտերն ու այգիները՝ առատ բերքատվության համար։ Եվ կրկին



Օգոստոսի 18-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ նշեց Ս. Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը։ Այս բերկրառատ օրվա առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Ս. Գայանե վանքում մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը։ Պատարագին էր Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Վազգեն Եպիսկոպոսը։

Ներկայացնելով տոնի խորհուրդը՝ պատարագի սրբազանը մասնավորապես ընդգծեց. «Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը Հայ Եկեղեցու տերունի ու տաղավար տոներից է և առանցքային նշանակություն ունի մեր քրիստոնեական հավատքի համար։ Նախ այս իրողությունը մեր Փրկչի հրաշափառ հարությունից հետո, մահկանացուներին մեզ առաջին հարության դեպքն է։ Աստվածամոր հարությունը և երկինք վերափոխությունը կատարվեցին Աստվածորդու հարության ու համբարձման նմանությամբ։ Եվ ինչպես Հիսուսը երեք օր անց կնքված գերեզմանից հարություն առավ և օրեր անց համբարձվելով՝ կանգ առավ իրեշտակների ինը դասերից յուրաքանչյուրում, նույնպես և Տիրամայրը՝ երրորդ

օրը հարություն առավ, պատանքները թողեց գերեզմանում և Փրկչի հետ իրեշտակների ինը դասերում կայանելով՝ բարձրացավ երկինք։ Դրա



փառք մեր հավատքի հայր ս. Գրիգոր Լուսավորչին, որ կրոնական տոներին միավորել և շաղախել է ժողովրդական ավանդություններն ու սովորությունները՝ դարձնելով դրանք համազգային տոնախմբություններ, ինչպիսիք են՝ Համբարձմանը՝ Ջանգյուլումը, Պայծառակերպության տոնին՝ Վարդավառը, և այսօր էլ՝ Խաղողօրհները»։

Վերջում սրբազան հայրը հորդորեց հավատացյալներին աղոթքով ու բարեսիրությամբ խնդրել Աստծուց խաղաղության ու բարօրության մեջ պահել Հայոց աշխարհը՝ հայ ժողովրդին պարգեւելով միմյանց նկատմամբ անսահման սեր ու քաղցրություն, որ աստվածընկալ ս. խորան և աստվածաբնակ տաճար Մարիամ Աստվածածինը շարունակի բարեխոսել ու հովանավորել ինչպես Հայոց աշխարհին, մեր Ս. Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Հավատ ս. Պատարագի, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Տրդատի բաց խորանին կատարվեց խաղողօրհների հանդիսավոր կարգը։

Վերջում օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգ

ՄԿՐՏԻՉ ՆԱԴԱՇԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սկիզբը՝ թիվ 11, 13, 15

Այսպիսով՝ մատնանշելով ազահության կործանարար հետեւամքները, բանաստեղծը ցանկանում է հորդորել, խրատել ժողովրդին հեռու մնալ ազահությունից, լինել հավատարիմ, ազնիվ, հեռու այնպիսի արատներից, ախտերից, որոնք կարող են հասարակություններ քայքայել, ժողովուրդներ ստրկացնել, բնաջնջել:

Կրոնական թեմաներն աշխարհիկ նպատակներով ներմուծելով գրականություն՝ Նաղաշը կարողանում է իր ստեղծագործություններով նպաստել գրականության աշխարհականացմանն ու այդ գրականությունը ժողովրդին ավելի հասանելի ու հարազատ դարձնելուն:

Ազահությունից բացի՝ Նաղաշը մերժում է նաեւ ռիսակալությունն ու խռովարարությունը: Ըստ Նաղաշի՝ ցանկացած մարդ, անկախ գիտական կոչման ու աստիճանի, դատապարտված է կործանման, եթե նրա հոգում բույն են դրել նախանձը, խռովարարությունն ու ռիսակալությունը: Իրեն բոլորից վեր դասող, անմեղ, անսխալ ու անթերի կարծող մարդը, որը լցված է նախանձով, ընկերների նկատմամբ չարությամբ, ինքն իրեն դատապարտում է կործանման (*նույն տեղում, էջ 54*).

*Թե կուսութեամբ քո պարծենաս, որպէս
իրեշտակ զքեզ գիտես,
Թե սիրտդ պիղծ է նախանձով, քան
զստանայ ես, թէ գիտես...*
*Թե իմաստութեան աղբիւր ես դու,
Արիստոտել զքեզ գիտես,
Թե չար կամիս քո ընկերիդ, անմիտ,
դու քեզ հոր կու փորես:*

Բայց բանաստեղծի հույսն ու հավատը դեռ վերջնական չի մարել: Նաղաշն ասում է, որ անգամ ամենամեծ մեղքերի տեր մարդը կարող է ազատվել դրանցից, արժանանալ արքայության, եթե հրաժարվի բոլոր վատ ու չար հակումներից, եթե կարողանա մարդկանց նկատմամբ ներողամիտ ու արդար լինել, եթե կարողանա իրենից վանել խռովությունն ու նախանձը:

Իսկ արտաքին նվաճողների դեմ պայքարող ժողովրդին համախմբելու ավելի ճիշտ, ավելի հասու միջոց չէր կարող լինել քան Նաղաշի՝ համերաշխության, ներողամտության, չափավոր լինելու կոչը: Ունկնդիրներին այս ամենն ավելի հասու դարձնելու համար Նաղաշն աշխատում է իր խոսքերը բացատրել սեփական օրինակով: Բանաստեղծության մեջ Նաղաշն իրեն ներկայացնում է բոլոր մարդկանց պես մեղավոր, մեղքերի մեջ թաղված մեկի՝ քննադատելով ինքն իրեն:

Նաղաշի համար անընդունելի բան էր նաեւ անհավասարությունը: Որպես ժողովրդասեր բանաստեղծ՝ Նաղաշը շատ լավ գիտակցում է տեսնում էր, որ հասարակության ներսում դեռեւս շատ արատներ, անարդարություններ, անօրէնություններ կան, որոնք առաջ են գալիս հարուստների և աղքատների միջեւ գոյություն ունեցող անհավասարություններից: Անհավասարություն, որ պատճառ է դառնում ժողովուրդների միասնության քայքայմանն ու պառակտմանը: Այստեղից էլ բխում է այն կարծիքը, որ Նաղաշը թե իր հասարակական գործունեությամբ, թե իր ստեղծագործությամբ ջանացել է համերաշխություն սերմանել ժողովրդի մեջ: Բայց իրականությունը, բնականաբար, ավելի դաժան էր, եւ Նաղաշին ստիպում է զգալ իր մեթոդների անգործությունն ու թուլությունը: Բանաստեղծը կրկին կանգնում



է երկընտրանքի առջեւ եւ ի վերջո առաջնություն տալիս հանդերձյալ կյանքի գաղափարին, սակայն չի ժխտում նաեւ երկրային, իրական կյանքը, ինչնում մենք համոզվում ենք «Վասն ազահութեան» բանաստեղծությունը կարդալիս: Այստեղ բանաստեղծը մի կողմից երազ ու սուտ է համարում երկրային կյանքը, մյուս կողմից՝ այդ նույն կյանքը դիտում որպես զանձերով, ճոխությամբ, բարիքներով փարթամ մի սեղան, որից ցանկանում է օգտվել ամեն ոք (*նույն տեղում, էջ 56*).

*Աշխարհս տուն է լի զանձերով,
փարթամութեամբ ու ճոխութեամբ,
Այլն սեղան է բարելի, որ ամենախոր
ցանկանան:*

Բայց այդ փարթամ ու բարիքներով լի սեղանից կարողանում են օգտվել միայն նրանք,

ովքեր հավատով իմաստուն են, չափավոր են, իսկ անմիտ, ազահ մարդիկ չեն կարող օգտվել այդ բարիքներից (*նույն տեղում*).

*Որք իմաստուն են հաւատով, զչափաւորն
առնուն գման,
Վայելեն ի հանգստեան եւ հասանեն
ի յօրեւան:*

*Եւ որք անմիտ են, չարափառ,
ազահութեամբն կուրանան,
Գիրկ ածեն անցաւորիս եւ ի յալեաց մէջն
ծփան:*

Ահա Նաղաշի համար երկրային կյանքը նույնպես գոյություն ունի, ու թեւեւ այն անցողիկ ու ժամանակավոր է, բայց այդ ժամանակավոր կյանքում եւս կարելի է երջանիկ եւ ուրախ լինել, եթե ինքիդ կարողանաս լինել չափավոր, արդարամիտ, ներողամիտ, եթե ուրիշներին չզրկես իրենց ունեցածից, չչափազործես մարդկանց, չնախանձես, եթե ռիսակալությունը, ազահությունն ու ընչաքաղցությունը կարողանաս վանել քեզանից:

Նաղաշի բանաստեղծությունների մեջ քիչ չեն կյանքն ու մահվան թեմայով խոհափիլիսոփայական տաղերը, որոնցում բանաստեղծը խիստ քննադատության է ենթարկում մահ կոչվող երեւոյքը՝ այն համարելով չարիքներից մեծագույնը: Իր այս դիտարկմամբ՝ Նաղաշը մոտենում է Ֆրիկին եւ ավելի շատ՝ Յովի. Թվուրանցուն, որոնց համար եւս անընդունելի ու զարմանալի էր այն, որ «անճանաչելի ու անքննադատելի» բարի Աստվածն այնպիսի չարիքներ է ստեղծում, որ շատ իմաստուններ ու խելացիներ չեն կարողանում պայքարել ու հաղթահարել:

Շարունակությունը՝ էջ 7

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՉԵՌՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ



Սկիզբը՝ թիվ 14–15

Նաջորդ կարելու հարցը, որին անդրադառնում է Յովհաննես Կոզեմն իր «Մեկնութիւն տումարի...» աշխատության մեջ, ամսվա հարցն է: Գ. Բադալյանն ասում է, որ ամիսը ժամանակի չափման ամենահիմնական ու գործածական միավորներից մեկն է: Ամսվա գործածությունը վաղմջական ծագում ունի եւ կապված է Լուսնի փուլերի կրկնման պարբերաշրջանների հետ, որի տևողությունը 29 օր, 12 ժամ, 44 րոպե, 2,8 վայրկյան է: Աստղագիտության մեջ Լուսնի այս ամիսը կարելի է կոչել Սինդիկ կամ զուգընթացական ամիս (*տես Բադալյան Գ., Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 24–25*): Անանիան այսպես է մեկնում ամսվա հարցը. «Տեսնելով առաջնոցն զԼուսինն լցեալ եւ մաշեալ, իմացաւ զանցաւորութիւն կենաց իւրոց, ասաց, թէ «իմ ես»» (*տես Էյնաթյան Զ., Աշխ., էջ 56*): Չնայած այն փաստին, որ Յովհաննես Կոզեմնի հրատարակված «Մեկնութիւն տումարի» բնագրում բացակայում են ամսվա վերաբերյալ կանոնները կամ մտածումները, ՄՄ Դմր 1999 զրչագրում դրանք առկա են: Գրչագրում կարդում ենք. «Նաեւ սա է պետք գիտենալ, թե հայոց ամիսների անունները ինչի պատճառով (որտեղից) այդպես կոչվեցին, քանզի ամիսների անունները կային նախքան Դայոց թվականը դնելը: Եվ այդ անունների պատճառն այս է, որ Նավասարդը, Դոռին, Սահմին, Մեհեկին, Արեգը եւ Մարերին Դայկի դուստրերն են (Դայկի դուստրերի անուններով են): Իսկ Տրեն, Քաղոցը, Արացը եւ Դորտին Դայկի որդիներն են (Դայկի

որդիների անուններով են): Չավակը, որ ծնվում էր՝ արու կամ էգ, զավակի անունով կոչում էին ամիսը՝ հոր եւ զավակների պատվին: Իսկ Մարգաց եւ Դարուանց անունները գործով վերցրին իրենց անունները, քանզի առաջ այս ամիսները ամռանն էին...» (*Տես ՄՄ Դմր 1999, ք. 29ա: Դատվածը գրաբարից աշխարհաբարի ենք վերածել մենք*): Ինչպես նկատելի է, Յովհաննես Կոզեմնը խոսում է Դայոց տոմարի ամսանունների վերաբերյալ: Շարադրանքի վերջնամասում անդրադառնում է նաեւ եբրայական տոմարի ամսանուններին, ինչպես նաեւ այլազգաց տոմարների ամսանուններին եւ նրանց ծագմանը (*տես ՄՄ Դմր 1999, ք. 75բ–76ա*): Յովհաննես Կոզեմնը նշյալ խնդրի մասին խոսելիս մեծապես օգտվել է Անանիա Շիրակացու մեկնությունից (*տես Անանիա Շիրակացու, Տիեզերագիտություն եւ տոմար, էջ 75–76*): Չենք կարող ասել, որ Կոզեմնը տառացի արտագրել է Շիրակացուց, բայց վերջինս անվանի վարդապետի համար ամենակարելու սկզբնաղբյուրն է համարվել ինչպես ամբողջ մեկնությունը, այնպես էլ ամսվա եւ ամսանունների մասին մեկնությունը գրելիս: Անանիան իր մեկնության մեջ եւս անդրադառնում է Դայոց տոմարի ամսանունների ծագման խնդրին, եբրայական եւ այլազգիների տոմարների ամսանունների առաջացման հարցերին (առավել մանրամասն տես նույն տեղում):

Շատ կարելու է մշել, որ իր մեկնության սկզբում Յովհաննես Կոզեմնը բացատրում է Ե-յակ թվականի առաջին տարվա համապատասխանությունը Դուլյան տոմարի 552/553 թվականին՝ Նավասարդի 1-ը գուգորելով դինաստիական տարբեր թվականներին, որոնք միարժեքորեն ցույց են տալիս 552 թվականը: Իսկ Քրիստոսի ծննդյան ամիս-ամսաթվի՝ Արաց 30-ի քննությամբ՝ վկայում է Դայոց թվականության 2-րդ հատվածի՝ 553 թվականին համապատասխանելու մասին: Բերենք նշյալ հատվածը. «Արդ, վասն

զի յԱրաց ամսոյ ի Լճն (30) հանդիպեցաւ դնել զգիր թուականութեան Դայոց ազգիս ի ձեռն Անանիայ Շիրակացոյն, Ժ.երորդ (10) ամի աթոռակալութեան Յոհաննիսի Դայոց կաթողիկոսի, որ ԻԳ. (23) թիւ էր հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ եւ ԻԵ. (25) ամին Յուստիանոսի կայսեր, ի հիմնարկութեան մեծի եկեղեցւոյն սրբոյն Սոփիայ, եւ ի ԻԵ. (25) ամին Խոսրովու Պարսից արքային. արդ, յայս տարւոջ յորում զթուականն եղին, ՌՁԴԶ. (5976) ամ էր յԱրաց մինչեւ ի Դայ թուականն: Եւ ի ծննդեան Բրիստոսի մինչեւ ի սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն են ամբ ՄԴԶ. (276), որ լինի ի ծննդեան Բրիստոսի մինչեւ ի հայ թուականն ամբ ԾԾԲ. (552)» (*տես նույն տեղում, էջ 80–81*):

Յովհաննես Կոզեմնն այնուհետեւ անցում է կատարում կրկնակին եւ ասում, որ Նավասարդ ամիսը կրկնակի չունի: Եվ թե որն է դրա պատճառը, նա տալիս է հետեւյալ պատասխանը. «Նաւասարդի կրկնակի չկայ: Եւ զԴնչ է պատճառն. վասն զի շաբաթն Է. (7) օր է, եւ ամիսն Լ. (30): Եւ յորժամ զամսին շաբաթ առնես, լինի Դ. (4) շաբաթ եւ Բ. (2) օր. այն կոչի կրկնակ: Եվ վասն զի Նաւասարդի զիւր կրկնակն չառնու զանձամբ, զի Բ. (2) օրն, որ առավելու քան զԴ. (4) շաբաթն, այն յեւս ամսոյն լինի»: Մեկնության հաջորդ հատվածում հեղինակը ցույց է տալիս Նավասարդին հաջորդող ամիսների կրկնակների հաշվման կարգը, այսպես. «Վասն այնորիկ Դոռի ամսոյն կրկնակն Բ. (2) լինի մնացեալն ի Նաւասարդոյ: Նոյնպէս եւ Դոռի ամիս զիւր կրկնակն, որ ի Նաւասարդէ էառ եւ զիւր յաւելուածն, որ լինի Դ. (4) օր, զայն Սահմոյ մատուցանէ: Նոյնպէս եւ զայլսն իմասցիս. զի երթայ ըստ կարգի, մինչեւ լինիցի շաբաթ, ապա ի մնին դառնայ»: Ինչպես նկատելի է բերված հատվածից, Յովհաննես Կոզեմնի կարգած կրկնակի կանոնը չէր տարբերվում Անանիա Շիրակացու կարգած նույնաբնույթ կանոնից: Պարզ է, որ Կոզեմնն այս կանոնը սահմանելիս օգտվել է Անանիա Շիրակացու աշխատությունից:

Դետեկելով մեր աշխատանքի նպատակիմ մենք կփորձենք նշյալ կանոնները համեմատել անվանի տոմարագետների կարգած նույնանման կանոնների հետ: Նախ ուզում ենք այն համեմատել Յովհաննես Սարկավազի կարգած նույնատիպ կանոնի հետ, որը, ինչպես գիտենք, անշարժացրեց Դայոց տոմարը՝ մարտի 20-ը զուգադրելով Արեգ 12-ին եւ նախնջ տարվա 1 օրը հավելելով Մեհեկան ամսին (31 օր), որից ածանցվել է՝ փետրվարի 29

= Մեհեկան 23-ին՝ նախնջ տարում: Չշեղվելու համար մեր թեմայից՝ այստեղ կբերենք միայն Մխիթար Այրիվանցու հիշատակությունը, որը կարդում ենք նրա «Պատմութիւն» աշխատության մեջ 1085 թվականի տակ. «Այկզմ նոր թուականին, որ կարգեցաւ ի Յովհաննէս վարդապետէ Դաղբատացոյ, որ Սարկաւագ կոչեցաւ» (*տես «Մխիթար Այրիվանցոյ Պատմութիւն Դայոց» ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 60*): Այսպիսով՝ Յովհաննես Սարկավազ իմաստասերի «Պատճէն տոմարի» աշխատության մեջ Դայոց տոմարի ամիսների կրկնակները որոշելու համար սահմանված է հետեւյալ կանոնը. «Կրկնակը ամսոց այսպէս արաւ. կալ զմաւասարդի ամսին եւ երթ է (7) է (7), մնա Բ (2). այն կրկնակ է հոռի ամսոյ: (Կ)ալ զհոռի ամսին եւ զիւր կրկնակն եւ երթ է, Է, մնա Դ (4), (ա)յն կրկնակ է սահմի ամսոյ: Նոյնպէս եւ զայլսն» (*տես Աբրահամյան Ա., Յովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 204*): Ինչպէս նկատելի է Յովհաննես Իմաստասերի «Պատճէն»-ում տրված կրկնակի մասին կանոնից, այն չի տարբերվում Յովհաննես Կոզեմնի ներկայացրած հաշվման եղանակից: Ինչպէս խոսել ենք վերոնշյալում, Յովհաննես Կոզեմն իր «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ արծարծած կնճիռների վերաբերյալ կանոնները եւ դրանց հաշվման կարգերը ներկայացրել է ըստ Դայոց շարժական տոմարի:

Սարկավազը սահմանում է նաեւ Դոռմեական օրացույցի ամիսների կրկնակը որոշելու կարգը: Նշյալ կարգը «Պատճէն տոմարի» աշխատությունում ձեւակերպված է այսպես. «Յաղազս կրկնա(ակ)աց. կալ զյունուարի ամիս ԼԱ (31), երթ է (7) է (7), որ մնայ՝ կրկնակ է փետրուարի ամսոյ: Կալ փետրուարի ամիս իւր կրկնակովն եւ երթ է (7) է (7), որ մնայ՝ կրկնակ է մարտի: Կալ զմարտի ամիս իւր կրկնակովն եւ երթ է (7) է (7), որ մնայ՝ կրկնակ է ապրիլի» (*տես նույն տեղում*):

Մեզ համար մեծ հետաքրքրություն ներկայացրեց նաեւ Դակոբ Դրիմեցու կարգած կանոնը կրկնակի վերաբերյալ: Վերջինս իր մեկնության կրկնակին վերաբերող հատվածում հարցեր է առաջադրում եւ պատասխանում այդ հարցմունքին: Նրա հարցմունքը վերաբերում է հետեւյալ խնդիրներին, թե ինչ է կրկնակը, ինչպէս պիտի այն հաշվել, ինչի համար պիտի կրկնել եւ թե ինչու պետք է դա կրկնակ կոչել:

Շարունակությունը՝ էջ 5

Գաղափարական հարցադրումները Ղազարոս Աղայանի «ԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆՎԵԼ» վեժում

Սկիզբը՝ թիվ 14–15

Ներսիսյան վարժարանում ուսանելու տարիներին Արությունը մտերմանում է իրեն գաղափարակից երիտասարդի՝ Մանվելի հետ: Նա Մանվելին զարմացնում է իր սովորածներով՝ Դին եւ Նոր Կտակարան, Զայսմավուրը, Պղնձե քաղաքի պատմություն, քերականություն եւ այլն: Իսկ Մանվելին Արությունի նախանձն է շարժում քաղաք գնալու եւ այնտեղ սովորելու մոտ ապագայի հեռանկարով: Սերը դեպի ուսումը երկու պատանիներին միացնող օղակ է դառնում, իսկ Ներսիսյան դպրոցը՝ Արությունի եւ Մանվելի կրթական նոր աշխարհը: Գյուղական իրականությունից պատանին ընկնում է թիֆլիսյան միջավայր, հաղորդակից դառնում իսկական գիտությանը եւ հասկանում, որ իր սովորածները սնոտիապաշտության արդյունք են եղել: Այստեղ Աղայանը սեղմ բնութագրումով ներկայացնում է դպրոցի ընդհանուր պատկերը, կրթական համակարգի անարդյունավետությունը: Այնուամենայնիվ, բավականին նյութական պաշարներ էին հատկացված կրթական այդ օջախին. «...այդ ուխտատեղի բոլոր արդյունքը հատկացված է Ներսիսյան դպրոցին, բայց որովհետեւ դպրոցը այդ տեղերից մոտիկ ոչ մի գյուղից մի որդեգիր չէր պահած եւ չէր պահում, դրա վրա բարկացած՝ ասում էր. «Ժողովրդի մի աչքը կուրացնում են» որ մյուսը լուսավոր պահեն»... (հ. 4, էջ 110): Դպրոցական ուսումն ավարտելուց հետո հերոսը գիտակցում է ավանդական մոլորությունների եւ խավարանտության դեմ պայքարելու անհրաժեշտությունը: Նա, վեժի մտնելով քաղաքացի ուխտավորների հետ, ասում է. «Ցավի համար՝ բժիշկ կա, քեփ անել էք ուզում, ձեր բաղեռումն ամեն օր քեփ էք անում, բայց եթե ավել փող ունիք, չեք իմանում, թե ինչ տեղ մսխեք, ես տեղը ցույց կտամ: Ձեր որդուց, ձեր աղջկերանցը ուսում տվեք, որ իրենց հավատը, իրենց ազգը ճանաչեն, ձեզ մասն չասեն, թե Վարդանս որն է, ուղիղ ճամփեն թողած՝ քարեքար չընկնին, լույսը թողած խավարի մեջ ման չգան» (հ. 4, էջ 58–59):

Թիֆլիսում Արությունի վրա խոշոր ներգործություն է ունենում Աբովյանի ընկեր Օվակիմը: Վերջինս աշխարհիկ մարդ էր իր մտածողությամբ եւ հոգեբանությամբ: Թիֆլիս մտնելու առաջին օրն իսկ Օվակիմն Արությունի ձեռքն է տալիս «Վերք Զայաստանի» վեպը: Գրքի հասկանալի լեզուն եւ քաղաքի

կենդանի շունչը ոգեւորում են Արությունին: Դա առաջին կենդանի խոսքն էր, որը լուսավորում է իր շուրջը, ցրում հոգում տիրող խավարը: Արությունը Մանվելի հետ ընդունվում է Ներսիսյան դպրոց, բայց այստեղ էլ նրանք չեն գտնում այն զենքը, որով կկարողանային պայքարել տիրող խավարի դեմ: Ներսիսյան դպրոցում իշխում էին նույն բռնակալական օրենքները, ինչ գյուղական խալֆայական դպրոցում: Աշակերտների միակ մխիթարությունը սիրված տեսուչ Շանշյանն էր, որի հեռանալուց հետո Արությունն ու Մանվելն էլ են լքում դպրոցը:

«Արություն եւ Մանվել» վեպի առանցքային գաղափարներից է ազգային միասնականությունը: Հեղինակը հայ քրիստոնյաների կաթոլիկ անջատումն անհմաստ է համարում՝ գտնելով, որ միեւնույն կրոնի հետեւորդները չպիտի անջատ լինեն իրարից: Արությունն իր առաքելությունն է համարում վերացնել այդ պատեղը եւ այդ նպատակով այցելում է կաթոլիկների քահանային: Նա փորձում է դառնալ վարժապետ, սակայն կաթոլիկների քահանան անհմար է համարում այդ՝ ասելով. «Քուզին միտքն ինդրի է, դու խայ ես, մենք կաթոլիկ» (հ. 1, էջ 139):

Աղայանի՝ աշուղական բանաստեղծական արվեստի մեկնամանքը հրսեւորած հետաքրքրությունն ու սերն արտահայտված էին նաեւ նրա գրական-իրապարակախոսական երկերում: Գրողը հաջողությամբ տիրապետում էր այդ բարդ արվեստին՝ հիմնավորելով, որ այդ երգերի մեկնամանք վերաբերմունքն արթնացել էր մանկության ժամանակ իրենց հյուրընկալ հարկի ներքո աշուղների այցերից: Զայարբեզ գյուղում Արությունը բաս (մրցության) է մտնում աշուղ Շուխյի հետ եւ իր տաղանդով կարողանում է շարունակել նրա համագործակցությունը: Այս հատվածում Աղայանն անդրադառնում է միջնադարի մեր աշուղներից մեկին՝ Սայաթ-Նովային: Հետաքրքրական է, որ վեպում տեղ գտած չափածո աշուղական հատվածները զգալիորեն մնան են Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստին, մասնավորապես ընդգծված մնամությունը կա բառապաշարի կիրառման մեջ: Աղայանն անդրադառնում է հայ ժողովրդի



ծագման առասպելին՝ իր սեփական մեկնաբանությունը տալով: Հակադրվելով աշուղների ստահող պատմություններին՝ Արությունն ասում է (հ. 1, էջ 132).

*Եթե դու գովեիր հայոց քաջերին,
Մի համբույր կըտայի սագիդ սիմերին,
Բայց դու հավատում ես շինծու բաներին,
Չգիտես ովքեր են Արամ եւ Տիգրան:
...Թե դու էլ լինեիր ինձ չափ կարդացած,
Կերգեիր անդադար Զայ ու Զայաստան...*

Արությունի այս խոսքերն անարձագանք չեն մնում, շարժում են մարդկանց՝ սնոտիապաշտության մեջ թաթախված մտքերն ու ուղեղները: Արությունին թուրքի շորեր հագած քեթիսուղաները, տերտերն ու աշուղը հայոց քաջերին գովերգելու նրա պահանջը որալուն են որպես Աստծո աչքը հայ ազգի վրա բաղցրացնելու նշան: «Մեր Գեւորգն ու Բաղդասարը,– ասում է տերտերը,– հիմի Թիֆլիս

են, ընդհանց գրեթե ուղարկում, որ ես կարդամ, դուք ականջ դնեք, բայց, մեղքս չեմ թաքցնիլ, ալարս էկել ա, թե կարդամ: Գրում եմ, թե՛ «Ժողովուրդիդ քարոզի...»: Էլ չեն գիտում, թե ժողովրդի գովում ենք քան ա հաստացել, որ մամռակալել ա: Ես քրեվբեն՝ ո՞վ գիտի՝ հիմի նրա համար էկավ ուստի սազը խլեց, որ ինձ զգուշացնի, միտս բերի մեր էրեխոց գրածը, թե չէ՛ մի օր էլ կգա իմ փիլոնը կխլի...» (հ. 4, էջ 132):

Արությունը քննադատական մոտեցում է ցուցաբերում հնացած արժեհամակարգի նկատմամբ՝ ասելով. «Էնդուր ենք վատացել, փչացել, կնիկ դառել, որ մեր պապին թողած բեկերին ենք պաշտում, ըղորթը թողած, մեզ սուտ բաներ են քարոզում» (հ. 4, էջ 156): Վեպն ավարտվում է գրողի՝ ապագայի հանդեպ անսահման լավատեսությամբ եւ հավատով: Աղայանի հերոսի քարոզած գաղափարները խոր արմատներ են գցում նաեւ լոռեցի որսորդ Պողոսի հոգում: Նա մահապետականությունը մարմնավորող կերպար էր, եւ Արությունն սկսում է նոր աշխարհի մասին գաղափարներ քարոզել նրա միջոցով: Պողոսը ոգեւորվում է այդ գաղափարներից եւ սպասում է, որ Արությունն իրեն առաջնորդի դեպի նոր աշխարհ: Արությունի տեսակը դառնում է ընդօրինակելի. Պողոսին են հանդիպում Արությունի մման մարդիկ, որոնք նույնպես լուսավոր մտքեր են գաղափարներ են տարածում: Սա հենց հեղինակի նպատակն էր լուսավորության, նոր գաղափարների տարածման ձգտումը:

Այսպիսով, Ղազարոս Աղայանը, շարունակելով խաչատուր Աբովյանի եւ Միքայել Նալբանդյանի սկսած պայքարը ազգային կյանքի առաջընթացի եւ լուսավորության բնագավառում, ի տարբերություն մախորդների, ստեղծեց վիպական ժանրի մի նոր տարատեսակ՝ ինքնակենսագրական վեպ: Ստեղծագործության գլխավոր հերոս դարձնելով իրեն՝ գրողը Արությունի կերպարի միջոցով ընթերցողին ներկայացրեց 1850–60-ականների երիտասարդության հասարակական դիրքորոշումները՝ ներկայացված մտավոր հետամնացության, սնոտիապաշտության ու խավարանտության դեմ պայքարի համատեքստում:

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՋԵՌՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Սկիզբը՝ էջ 4

Հակոբ Ղրիմեցու կարգած կանոնն ունի առանձնահատկություն, որը մենք չենք նկատել մեր թվարկած մախորդ հեղինակների գործերում, այն է, թե՛ «վասն էր զանուն կրկնակ ընկալաւ»: Դրան անվանի տոմարագետը տալիս է հետեւյալ պատասխանը. «...Չորրորդ՝ թե ինչու անունը որպես կրկնակ ընկալվեց, քանի որ բոլոր անունները երբեք մասից են բաղկացած իրից (առարկա, նյութ), արվեստից եւ ծայնից: Եվ իրից, ինչպես ասում ենք «սապաւն» («Սապաւն» նշանակում է 1. կողով, 2. արկղ: *Տես Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, Երեւան, 2000, հ. Բ., էջ 444*), քանի որ պարունակում է իր մեջ հաց կամ ուրիշ ինչ-որ բան, «սափոր», քանի որ իր ներսում ունի փոս (ծակ, խորշ), «փակեղ» («Փակեղն» նշանակում է 1. գլխի փաթաթան, փաթոց, 2. կանանց եւ կույսերի գլխի ծածկոց: *Տես նույն տեղում, էջ 589*), քանի որ գլուխը ծածկելու համար է, «կարաս»՝ այստեղ կա ջուր (կայ աստ ջուր) կամ գինի: Չայնից. թռչունի ճվճվալու պատճառով անվանում ենք «ճնճղուկ» եւ կոկոռալու պատճառով՝ «ազնավ» եւ կշկշալու պատճառով՝ «կաշաղակ» եւ խոսելու պատճառով՝ «խոսող»: Արվեստից, ինչպես հյուսնության համար՝ «հյուսն», ինչպես սարդի՝ ոստայն հյուսելու համար՝ «սարդոստայն», եւ մեղր պատրաստելու համար՝ «մեղու», եւ գուրպախի՝ բույն շինելու համար ասում ենք «գուրպարար» («Գուրպարար» նշանակում է «այն թռչունը, որն իր թաթմանի ձեռով բոյնը կախում է ծառի ճիւղերից») (*Տես Աճառեան Զ., Զայերեն արմատական բառարան, Երեւան, 1926, էջ Կ. Ա., էջ 599*): Նույնպես եւ կրկնակի անունը արվեստից ընկալվեց, քանի



որ կրկնելով արվեստավորվեց կրկնակի գյուտը» (*տես Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, էջ 213: Զատվածը գրաբարից աշխարհաբարի ենք վերածել մենք*): Այս հատվածում գեղեցիկ կերպով ներկայացվում է կրկնակի անվան խնդիրը, որն առանձնահատկություն է եւ տարբերվում է մախորդ հեղինակների մեկնություններից: Եվ չնայած այն փաստին, որ մեկնությունն առավել շատ աղերսվում է բանասիրության, այլ ոչ թե տոմարի հետ, մեր նպատակն էր ցույց տալ կանոնի սահմանման առանձնահատկությունը, որը, ինչպես ասացինք, նկատելի էր միայն Հակոբ Ղրիմեցու մեկնության մեջ:

Հաջորդ խնդիրը, որ քննարկում է Կոզեմն իր «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ, վերադրի հարցն է՝ Վարդապետը մշում է, թե

ինչու եւ որտեղից ամեն տարի 11 պիտի գումարել բերենք հատվածը. «... որովհետեւ ամեն տարի լուսինը իր պտույտը 11 օր ավելի շուտ է կատարում, քան արեգակը: Քանի որ արարչագործության չորրորդ օրը առավոտյան Աստված ստեղծեց Արեգակը, իսկ երեկոյան՝ Լուսինը: Եվ Լուսնի ստեղծման ժամանակ (Լուսնի ընթացքից) 11 մաս պակասում էր Արեգակի ընթացքից: Եվ այն մեկ ամսում լինում է 11 ժամ, իսկ մեկ տարում՝ 11 օր: Եվ հենց դա է կոչվում վերադիր: Այժմ երբ կամենաս վերադիրը հաշվել, անցած տարիների վերադիրները պիտի ամեն տարի հաշվել 11: Այս է գումարման պատճառը»: Հետո բացատրում է, թե ինչու 19-ամյակի վերջին տարում պետք է ավելացնել 12 եւ ոչ թե 11: «...Պատճառն այն է, որ Ապրիլի 13-ի լրման տարուց, որը բոլորակի սկիզբն է՝ հաշվման իմաստով, մինչեւ մարտի 25՝ բոլորակի վերջը, ամեն տարի մնացած են լինում մասնիկներ (մատուցներ): Եվ դրանք ժողովվում, կուտակվում են, եւ ամբողջ 19-երկարվում լինում է 361 մասնիկ, որ լինում են 30-մասնյա 12 ժամ, եւ մնում է մի մասնիկ... Այդ է պատճառը, որ 19-ամյակի վերջին տարում պետք է ավելացնել 12: Եվ այդպես պետք է վարվել, որ վերադիրը անսխալ լինի: Իսկ երբ ասում է «Ը (8) հանապազ երթ...», նրա համար, որ մախ-

քան Հայոց թվականը դնելը առաջին տարում վերադիրը 22 էր, իսկ թվականը դնելու ժամանակ՝ 3: Եվ երբ գումարում ես, ստացվում է 11: Եվ հին վերադիր վրա բերելով՝ ստացվում է 22, իսկ միավորելով 11-ն ու 22-ը, ստացվում է 33: Հանելով հին վերադիրը՝ 22 եւ նոր վերադիրը՝ 3, մնում է 8: Եվ այս պատճառով է, որ ասվում է «Ը (8) հանապազ երթ...» (*Տես Էյնաթյան Զ., Տիեզերագիտության եւ տոմարի մեկնություններ, էջ 83–84: Զատվածը գրաբարից աշխարհաբարի ենք վերածել մենք*):

Ի մի բերելով Հովհաննես Կոզեմն Տարոնացի վարդապետի կարգած կանոնները վերադրի մասին՝ փաստենք, որ նա չի բացատրում, թե ինչ է վերադիրը եւ միանգամից անցում է կատարում «ամեն տարի 11 գումարելու» կանոնի մեկնությանը: Իրենից առաջ հայտնի տոմարագետներն արդեն անդրադարձել էին վերադրի հասկացության բացատրությանը. գուցե հենց դա է պատճառը, որ նա միանգամից անցում է կատարում ուրիշ հարցի սահմանմանը: Որպես ընդհանրություն մշենք, որ Հիրակացու սահմանած «Դարձեալ» զմետասան աուլոսն, զոր Արեգակը աւելի ընթանայ, քան զԼուսինն, վերադիր կոչեցին...» (*տես Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տոմար, էջ 70–71*) միտքը ձեւակերպել է նաեւ Հովհաննես Կոզեմնը:

Մերօրյա անվանի տոմարագետ պրոֆ. Ռ. Վարդանյանի ուսումնասիրությունները հանգեցրել են այն իրողության բացահայտմանը, որ Անանիա Շիրակացին ՀԼԲ-ամյա Չատկացուցակներ է ստեղծել եւ Հուլյան, եւ Հայոց տոմարներով:

Շարունակությունը՝ էջ 8

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԽՈՍՔ ԵՎ ԽՈՍՔԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Լեզվի ու նրա դրսևորման խոսքի դերը շատ մեծ է բազմաթիվ առումներով: Մարդն իր մտքերը ձեռնարկում է արտահայտում է լեզվի ու խոսքի միջոցով, այդ նույն միջոցով են սերնդեսերունդ փոխանցվում կուտակված գիտելիքները, գրվում նորանոր հայտնագործությունների մասին եւ այլն: Չմոռանա՞նք՝ «Ի սկզբանէ էր բանն...»: Ինչպէս տեսնում ենք, լեզուն տարբեր գործառնություններ ունի, որոնցից մեկն էլ հաղորդակցման միջոց լինելն է: Լեզվի այդ գործառնությունը չափազանց կարեւոր է, իսկ երբ հաղորդակցումն իրականացվում է բացատրության նպատակով, ապա այն ավելի է կարեւորվում: Խոսք կազմողը լեզուն պետք է այնպես գործածի, որ նրա միջոցով կարողանա բացատրել, հասկանալի դարձնել իր ասածը: Լեզվի այս գործառնությունը հիմնաքարային է ուսուցման բոլոր բնագավառներում: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանի «Մաթեմատիկական կրթության լեզուն եւ խոսքը» գիրքը («*Էդիթ Պրինտ հրատ., եր., 2019*») նվիրված է լեզվի կիրառմանը մաթեմատիկայի ուսուցման բնագավառում եւ ոչ միայն: Հեղինակը, համադրելով տարբեր փաստեր, ուշադրության կենտրոնում պահելով ուսուցման գործընթացի առանցքային հարցերը, ներկայացնում է լեզվի ու խոսքի դերը ուսուցման, մասնավորապես մաթեմատիկայի ուսուցման ժամանակ, այնուհետեւ վերլուծում նաեւ մաթեմատիկայի լեզուն: Նշելով, որ «առանց բնական լեզվի անհնար է շարադրել մաթեմատիկան, ֆիզիկան եւ այլն» (էջ 20)՝ հեղինակը գրում է, որ «Մաթեմատիկան եւ նրա լեզուն առաջացել են մարդկային կարիքները բավարարելու պահանջից» (էջ 33), քանի որ կենսագործունեության ընթացքում անհրաժեշտ է առնվազն տեղեկություններ իմանալ շրջապատող աշխարհի մասին (օրինակ՝ հեռու, մոտիկ, շատ, քիչ, երկար, կարճ եւ այլն): Այդ պահանջը բավարարե-

լու համար մարդն աստիճանաբար ձգտել է ճշգրտության, միարժեքության: «Ձեռակամացման այս գործընթացը մաթեմատիկայում իրականացվում է տերմինների ճշգրիտ սահմանման, հատուկ նշանային համակարգի ներառման, դատողությունների ճշմարտացիության, մտահանգումների հիմնավորվածության, ապացուցումների իրագործման վերաբերյալ հստակ կանոնների կիրառմամբ: Այստեղ ոչ թե առանձին բառեր մեխանիկորեն փոխարինվում են նշաններով, այլ ստեղծվում է հստակ լեզուն՝ իր ձեռաբանությամբ եւ շարահյուսությամբ» (էջ 34–35): Եվ այդ լեզուն ունի իր այբուբենը: «Այն կազմվում է բնական լեզվի այբուբենից, որոշ հատուկ նշաններից, որոնց մեջ մտնում են լատինական եւ հունական այբուբենի տառերը, կետադրական նշանները, փակագծերը եւ այլն» (էջ 36): Այսինքն՝ գիրքը նվիրված չէ սոսկ մայրենի կիրառությանը ուսուցման գործընթացում, այլ ընդգրկում է մի շարք հարցեր, որոնց մեջ առանցքայինը մաթեմատիկական լեզուն է: Գրքում լեզվական շատ խնդիրներ, խոսքի մշակույթին առնչվող շատ հարցեր ներկայացվում են կիրառական տեսանկյունից, զուգահեռներ են անցկացվում լեզվական, մաթեմատիկական, տրամաբանական եւ այլ հասկացությունների միջեւ: Հեղինակը լայնորեն ուսումնասիրել է թեմային վերաբերող հայերեն եւ օտարալեզու գրականությունը, ըստ անհրաժեշտության՝ ներկայացրել տարբեր կարծիքներ, մոտեցումներ ու տեսակետներ, համադրել ու հակադրել դրանք, կատարել ընդհանրացումներ ու եզրահանգումներ: Ընդ որում՝ ուսումնասիրվել են տարբեր գիտությունների (մաթեմատիկա, տրամաբանություն, փիլիսոփայություն, լեզվաբանություն, մանկավարժություն եւ այլն) վերաբերող աշխատություններ: Նյութը ներկայացված է աշխույժ ու մատչելի շարադրանքով, որը նպաստում է գրքի գործնական արժեքի բարձրացմանը: Թեեւ գիրքը վերնագրված է «Մաթեմատիկական կրթության լեզուն եւ խոսքը»,

սակայն հեղինակն անդրադարձել է հարցերի ավելի լայն շրջանակի: Դա պարզ է դառնում թեկուզ գլուխների վերնագրերի պարզ թվարկումից՝ «Լեզվաբանական ներածություն», «Մաթեմատիկայի լեզուն եւ խոսքը», «Դպրոցական մաթեմատիկայի լեզուն», «Դպրոցական մաթեմատիկայի խոսքի մշակույթը», «Մաթեմատիկան հայոց լեզվում», «Լեզվի եւ խոսքի արժեքանական տեսանկյունը», «Հայոց լեզվի եւ խոսքի գեղեցկության մաթեմատիկական չափանիշը»: Այս գլուխները բաժանված են ենթագլուխների: Ինչպես տեսնում ենք, հատկապես գրքի վերջին մասերում հեղինակն անդրադարձել է այնպիսի խնդիրներին, որոնք առաջին հայացքից կարծես թե չեն ընդգրկվում գրքի վերնագրի շրջանակներում, սակայն այդ հատվածները կարողալուց հետո պարզ է դառնում, որ դրանք քննված են այն մոտեցմամբ, որ լիովին կապվում են մնացած նյութին, եւ ստացվում է համապարփակ ամբողջություն: Գիրքն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, քանի որ շատ հարցեր նորովի են ներկայացվում: «Մաթեմատիկան հայոց լեզվում» գլխում առանձին ենթագլուխներով քննված են թվերը, հաստատումները եւ փոփոխականները հայոց լեզվում, գուժարումը, հանումը, բազմապատկումը եւ բաժանումը հայոց լեզվում, ինչպես նաեւ մաթեմատիկական բանաձեւերը հայոց լեզվում: Այս բաժիններում հեղինակն անդրադարձել է մաթեմատիկական տարբեր իրողությունների լեզվական դրսևորումներին: Օրինակ՝ գումարում արտահայտելու համար գործածվում են տարբեր բառեր, ընդ որում՝ դրանք միավորվում են տարբեր խմբերի մեջ, մայած թե ինչի ավելացում են արտահայտում: Երկարություն ավելացման վերաբերյալ գործածվում են «երկարացնել», «բարձրացնել», «խորացնել», «կցել», «ձգել» եւ այլ բառեր, մակերեսի ավելացման վերաբերյալ՝ «ընդարձակել», «լայնացնել» եւ այլն: Այդպիսի բառերի կիրառությունները ներկայացվում ու մեկնաբանվում են փոքրիկ խնդիրներով ու առաջադրանք-

ների օրինակներով, որոնք ավելի հստակ ու մատչելի են դարձնում տարբեր մեկնաբանությունները: Գրքի վերջին «Հայոց լեզվի եւ խոսքի գեղեցկության մաթեմատիկական չափանիշը» գլխում ներկայացված են «Մաթեմատիկական խոսքի գեղեցկությունը», «Հայոց լեզվի երկրաչափական գեղեցկությունը», «Հայերեն խոսքի հանրահաշվական գեղեցկությունը» ենթագլուխները: Այստեղ քննվում են մի շարք հարցեր, որոնք սերտորեն առնչվում են տաղաչափական տարբեր խնդիրների եւ գրականության տեսության բնագավառից են: Նշված ենթագլուխներում գեղարվեստական բազմաթիվ ստեղծագործություններից մեջբերումներ կան, որոնք վերլուծվել են համապատասխան տեսանկյունից: Այս գլխի վերաբերյալ ցանկանում ենք մի դիտարկում կատարել. թեեւ հիմնականում ամբողջ գրքում տարբերակված են լեզուն եւ խոսքը, սակայն լեզվի երկրաչափական գեղեցկության քննության ժամանակ, լեզվականից բացի, բերվում են նաեւ խոսքային իրողությունների օրինակներ (օրինակներ չափածո ստեղծագործություններից եւ այլն): Գրքի տարբեր գլուխներում բավականին բազմազան իրողություններ են քննվել, բայց ամբողջ գրքում պահպանվում է իմաստասիրական մոտեցումը նյութին, ակնհայտ է երեւոյթները համադրելու, վերլուծելու, դրանց էությունը բացահայտելու նպատակադրումը, որը հաջողությամբ իրականացվել է: Գրվել է մի գիրք, որը գիտամեթոդական նշանակություն ունի, ամփոփում է նաեւ հեղինակի նախորդ որոշ ուսումնասիրությունների արդյունքներ, որոնցից, ինչպես հեղինակն է առաջաբանում նշում, «...առանձին հատվածներ բերված են նաեւ այս աշխատանքում՝ վերջինիս ընթերցումը անկախ դարձնելու նպատակով»: Կարծում ենք՝ գիրքը կծառայի իր նպատակին եւ մեծապես կօգնի դասավանդողներին ու սովորողներին:

Արտաշես ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԿԱՐԵՆ ԿՈՆԴԱԶՅԱՆ



խապապը բնակություն հաստատեց Նյու Յորքում եւ սկսեց աշխատել հագուստի ֆաբրիկայում: Այնուհետեւ նա հասնում է նյութական զգալի կարողության եւ ապահովում ընտանիքի բարեկեցիկ կյանքը:

Չնայած Կարենն ուներ հայկական ծագում, սակայն գրեթե հայերենին չէր տիրապետում: Դերասանուհու ծնողները երազում էին, որ դուստրը դառնա կամ բուժքույր, կամ էլ ուսուցչուհի, ամուսնանա եւ ունենա շատ երեխաներ: Սակայն Կարենը հուսախաբ արեց ծնողներին: Նա բնավորությամբ հեռու էր իդեալական հայկնոց կերպարից: Կարենն իր կարիերան սկսեց ութ տարեկանում. մա մի անգամ պատահականորեն մասնակցեց «Մանուկներն անսովոր բաներ են ասում» մանկական հայտնի հեռուստահաղորդմանը: Այս հաղորդմանը մասնակցելուց հետո Կարենը երազում էր դառնալ դերասանուհի ու խաղալ Բրոդվեյում: Ուսանեց Սան Ֆրանցիսկոյի թուեջում, իսկ այնուհետեւ՝ երաժշտության ու դրամատիկական արվեստի ակադեմիայում: Ուսումնառությունից հետո Կոնդազյանն սկսեց աշխատել թատրոնում: Նրա առաջին դերը Ֆլորա Օֆորտի դերն էր «Կաթ տեղափոխող գնացքն այլեւս այստեղ կանգ չի առնում» պիեսում: Նա զանազան դերեր է խաղացել Ամերիկայի տարբեր վայրերում, մինչեւ որ նրան հրավիրեցին Բրոդվեյ: Վերջապես արվեստագետի երազանքն իրականացավ: Կարենը ցնցող հաջողությունների հասավ, դեռ ավելին՝ նրան սկսեցին համարել Ամերիկայի ամենահիրապուրիշ դերասանուհիներից մեկը: Դերասանուհու խոսքով՝ սրանք իր կյանքի



լավագույն տարիներն էին: Նա ձեռք բերեց բազմաթիվ երկրպագուներ: Դրանցից մեկը Լեքս Փարքերն էր, որը «Տարզան» սերիալի գլխավոր դերակատարն էր:

Նշենք, որ Կոնդազյանն այդպես էլ երբեք չամուսնացավ: Նա երկար ժամանակ շփվում էր իրենից քսան տարով մեծ Լեքս Փարքերի հետ: Նրանք նշանված էին եւ

պատրաստվում էին ընտանիք կազմել, սակայն Փարքերն անսպասելիորեն մահանում է կաթվածից: Որոշ ժամանակ անց սփյուռքահայ դերասանուհին կարճատեւ սիրավեպ է ունենում Հորդանանի թագավոր Հուսեյն իբն Թալալի հետ:

«Ես չեմ դժգոհում իմ ճակատագրից: Այն, ինչ կատարվել է իմ կյանքում, իմ վերելքների ու անկումների գրավականն է: Հոգով ես միշտ ազատ եմ եղել եւ ճիշտն ասած՝ Լեքսի հետ ունեցած հարաբերություններից հետո ես այլեւս չէի ցանկանում ամուսնանալ որեւէ մեկի հետ»,– ասել է Կարենը:

Կոնդազյանը խաղացել է ոչ միայն թատրոնում, այլեւ ավելի քան հիսուն ֆիլմում: Նա նկարահանվել է Ալ Պաշինյի, Սիլվեստր Ստալոնեի, Մաշլոն Բրանդոյի եւ հայտնի այլ դերասանների հետ: Կոնդազյանը նկարահանվել է այնպիսի ֆիլմերում, ինչպիսիք են «Հրեշտակների շշուկը», «Բասկերվիլի շները», «Ուղթորներ», «Կոբրա», «Քեզին ու Լեյսին», «Մթնշաղի ժամը», «Գանգստերական պատերազմներ», «Շարունակի երազել», «Այո, Ջորիո» եւ այլն: Բացի թատրոնում խաղալուց եւ կինոյում նկարահանվելուց, Կարենը նաեւ գրքեր է գրել: Կոնդազյանի առաջին գիրքը կոչվում է «Մտրակը» (2012): Գիրքը հրատարակվեց հինգ հազար տպաքանակով եւ բազմամիլիոնաճ շահույթ բերեց: Այս գումարի մի մասը Կոնդազյանը նվիրաբերեց Հայաստանին՝ բարեգործական նպատակներով: Կոնդազյանը մինչ օրս էլ շարունակում է գրողի իր գործունեությունը:

Տես նաեւ՝ էջ 8

Ամերիկյան թատրոնի եւ կինոյի բնագավառներում նշանակալից ներդրում է ունեցել դերասանուհի Կարեն Կոնդազյանը: Նա զբաղվել է ոչ միայն դերասանական արվեստով, այլեւ հայտնի է որպես բեմադրիչ ու գրող եւ արժանացել է թատերական մի շարք մրցանակների: Կոնդազյանը 1970-ական թվականների ամենաբարձր վարձատրվող եւ Հոլիվուդի ամենահմայիշ դերասանուհիներից մեկն էր:

Ծնվել է 1950 թ. հունվարի 27-ին ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Նյուտոն քաղաքում: Դերասանուհին ասում էր, որ իր նախնիները Բիթլսից էին: Կարենի նախապապը ժամանակին կաշառել էր թուրք ժանդարմներին եւ փրկել իր ընտանիքը ցեղասպանությունից: Նրա ընտանիքն Օսմանյան կայսրությունից ճողորպել էր Ֆրանսիա, իսկ այնուհետեւ գաղթել ԱՄՆ: Ապագա դերասանուհու մա-

ՄԵՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ. ԱՐՏԱՇԱՏ



Սկիզբը՝ էջ 7

1-ին դարի 60–70-ական թվականներին Արտաշատը վերաշինվեց եւ շարունակեց խաղալ մայրաքաղաքի իր խոշոր դերը: 116 թ. հռոմեական զորքերը Տրայանոս կայսեր գլխավորությամբ կրկին գրավեցին Արտաշատը, բայց մեկ տարի անց ստիպված եղան հեռանալ:

163 թ. հռոմեական զորքերը պաշարում եւ վերցնում են Արտաշատը: Նվաճողները մտադիր էին Չայաստանը դարձնել Հռոմի մի նահանգ, սակայն նրանց դեմ այս անգամ էլ ոտքի կանգնեց հայ ժողովուրդը: Եվ, ինչպես երեւում է, ապստամբության կենտրոնն Արտաշատն էր:

164 թ. մայրաքաղաքը մասամբ ավերված Արտաշատից տեղափոխվեց Վաղարշապատ, որն անվանվեց Կայնե Պոլիս՝ Նոր քաղաք:

Արտաշատը, այնուամենայնիվ, պահպանում էր առաջին մայրաքաղաքի դերը, մինչեւ նրա շուրջ առաջացած ճահիճների եւ վատ օդի պատճառով հայոց խոսքով Կոտակ թագավորը (332–338 թթ.) իր արքունիքը տեղափոխեց Դվին:

Ինչպես երեւում է, դրանից հետո էլ Արտաշատը մնում էր խոշոր քաղաք, բայց հետո նրան սպասում էր մի նոր՝ ծանր, կարելի է ասել՝ կործանիչ հարված: 360-ական թվականներին Չայաստան գերխուժեց Սասանյան

մյան Իրանի Շապուհ 2-րդ շահի բանակը, որը գրավեց եւ ավերեց հայկական քաղաքները, այդ թվում՝ Արտաշատը՝ գերեվարելով նրա բնակիչներին: 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի վկայությամբ՝ պարսից զորքերը «Եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, եւ առին զնա, եւ կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, եւ գերեցին զամենայն քաղաքն: Եւ խաղաղուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն եղ հրեայս, զոր անեալն էր գերի Տիգրանայ Արքայի Արշակունւոյ յերկրէն պաղեստինացոց եւ քառասուն հազար երդ հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղաղուցին: Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, եւ զքարակերտն քանդեցին»: «Քարը քարի վրա չթողեցին եւ քաղաքն անմարդաբնակ դարձրին», – ավելացնում է պատմիչը:

Որքան էլ չափազանցված լինեն պատմիչի նշած թվերը, դրանք վկայում են, որ Արտաշատը 4-րդ դարի 60-ական թվականներին դեռեւս խոշոր քաղաք էր: Դրանից հետո Արտաշատն անկում էր ապրում, թեւեւ ավանդաբար պահպանում էր միջազգային տարանջիկ առևտրի հանգույցի եւ պահեստատեղիի՝ հնուց եկած նշանակությունը:

Արդեն 7-րդ դարում երբեմնի խոշոր եւ ծաղկյալ քաղաքի տեղում մնացել էին մի փոքր ամրոց եւ մի ավան, որի բնակիչներն զբաղվում էին որդան կարմիր ներկի արտադրությամբ եւ դրանով թել ու գործվածքներ ներկելու արհեստով: Այնուհետեւ Արտաշատն անհետացավ պատմության թատերաբեմից, եւ երկար ժամանակ հայտնի չէր նույնիսկ տեղը նրա: Մեծամոր գետը, որ հնում իրոք մեծ գետ էր եւ, իր մեջ առնելով Քասախի, Հրազդանի եւ Ագատ գետի ջրերը, Արքասին միանում էր Արտաշատի մոտ, հետագայում փոխելով իր ընթացքը, խառնվում է Արաքսին՝ միանալով

միայն Քասախի հետ: Իսկ, ինչպես տեսանք, Խորենացին վկայում էր, որ «Արտաշատը գտնվում է այն տեղը, որտեղ Երասխը եւ Մեծամորը խառնվում են»:

Եվրոպական ճանապարհորդները, ինչպես եւ Ղեւոնդ Ալիշանը եւ ուրիշներ, Դվինի ավերակները շփոթել են Արտաշատի հետ: Ն. Յա. Մառը դեռեւս 1899 թ. հետախուզական պեղումներ կատարեց Վերին Արտաշատ գյուղի մոտ գտնվող հնավայրի միջնաբերդում, բայց սահմանափակ ծավալի այդ պեղումները հնարավորություն չտվեցին նրան վերջնականապես պարզելու՝ Արտաշատն է այդտեղ գտնվել, թե՛ Դվինը:

Արտաշատի տեղը հայտնի է դարձել դեռեւս 1920–30-ական թվականներին, թեւեւ տարակուսանքներ դեռեւս մնում էին:

1967 թ. Արտաշատ հիմ քաղաքի մոտ՝ Փոքր Վեդի գյուղի ծայրամասում, հայտնաբերված լատիներեն արձանագրություններն առիթ ծառայեցին ավելի հանգամանորեն ծանոթանալու Արտաշատի տեղանքին, մասամբ էլ մղեցին շուտով ձեռնարկելու հին Չայաստանի փառաբանված մայրաքաղաքի պեղումներին, որոնք սկսվեցին 1970 թ. եւ տվեցին գոհացուցիչ արդյունքներ՝ հաստատելով հնամենի քաղաքի աշխարհագրական դիրքը վերոնշյալ վայրում:

Կատարված հնագիտական պեղումները թույլ են տալիս պնդելու, որ Արտաշատը եղել է շատ ավելի մեծ քաղաք, քան կարելի էր պատկերացնել: Այն գրավել է ընդարձակ տարածություններ Արաքս գետի ձախ ափին՝ ուղիղ վեհամիստ մասի դիմաց, ընդգրկել է Խորվիրապի բլրախմբի բոլոր բլուրները եւ նրանց միջեւ ընկած դաշտերը եւ շրջապատված է եղել պարիսպներով:

ԱՆՈՒՆ ԱՐԱՍԱՐՅԱՆ

ՌՈԳԻ ՎԱՐՈՂ ՔՐԱՆՍԻՏԻԱՆԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ



Ռոգի Վարդը համարվում է անցած դարի ութսունական թվականների ամենահմայիչ սփյուռքահայ դերասանուհիներից մեկը: Իր անկրկնելի արտաքինի, բարի սրտի եւ հումորի զգացումի շնորհիվ հայազգի կինը գերեց բազում երկրպագուների ու հեռուստադիտողների սրտերը:

Ռոգի Վարդը (Նվարդ Մանվելյանը) ծնվել էր Ստամբուլում 1923 թ. նոյեմբերի 23-ին: Շուտով Մանվելյանները տեղափոխվում են Ֆրանսիա: Փարիզում աղջիկն ավարտում է ժամ փլարի թատերական ստուդիան եւ 1946 թ. առաջին անգամ բեմ բարձրանում Ռոգի Վարդ կեղծանունով:

«Ռոգի Վարդը շատ կանացի էր ու եռանդուն: Նա մշտապես գրավում էր շրջապատի մարդկանց ուշադրությունը», – այս խոսքերը պատկանում են ֆրանսիացի դերասան ժան Ռոշֆորին: Մի հարցազրույցի ընթացքում դե-

րասանուհին ասել է, որ «Վարդ» մականունը Նվարդի կրճատված տարբերակն է: Նա վերցրել էր Վարդ մականունը, քանի որ ֆրանսիացիները դժվարանում էին արտաբերել նրա ամբողջական անունը:

«Ամեն դեպքում իմ անունը չի կորցրել իր հայկական նշանակությունը: Բեմում հաճախ էին թյուրմբռնումներ առաջանում՝ կապված իմ անվան արտասանության հետ: Կեղծանուն վերցնելուց հետո ամեն ինչ իր տեղն ընկավ», – ասել է Ռոգին:

Դերասանուհին կատարելապես խաղում էր Ֆեդերիկո Գարսիա Լորկայի, Նիլ Սայմոնի, Ռասինի ու Ալֆոնսո Լետոյի երկերում: Այս դերակատարումներից հետո նա զգալի թատերական համբավ ձեռք բերեց: 1971 թ. Ռոգին դարձավ հանրահայտ «Կոմեդի Ֆրանսեզ» թատրոնի նոր աստղը: Նա դերեր է կերտել ոչ միայն թատրոնում, այլեւ կինոյում: Առաջին ֆիլմը, որտեղ նկարահանվել էր Ռոգի Վարդը, ռեժիսոր Անրի-ժորժ Կլուզյի «Մանոն» ֆիլմն էր: Այս դերակատարումից հետո ֆրանսահայ դերասանուհին արժանացավ քննադատների դրական գնահատականներին: Այնուհետեւ նա մոր դերերի առաջարկություններ է ստանում ռեժիսորներ ժան Ռենուայից, Ֆրանսուա Տրյուֆույից, Անրի Վերնեյից եւ Քլոդ Սոտեից: Նշված ռեժիսորների հետ տաղանդավոր դերասանուհին համագործակցել է տասը տարի շարունակ: Նրա լավագույն դերերից են «Սեր քսան տարեկանում», «Իմ քեռի Բենջամենը», «Վասա ժելեզուկան», «Սերը փախուստի մեջ» ֆիլմերում: Սակայն Ռոգի Վարդը փառքի գագաթնակետին հասավ ութսունական թվականների վերջերին, երբ նկարահանվեց «Մագոյ» հանրահայտ կատակերգական հեռուստասերիալում: Վերջինիս մեջ դերասանուհին փայ-

լուն կերպով մարմնավորեց Մագի Բույեի դերը, որի համար էլ արժանացավ «Յոթ ոսկյա գիշեր» մրցանակին: Ինչ վերաբերում է վերոնշյալ հեռուստասերիալին, ապա այն համարվում է ֆրանսիական կինոյի լավագույն հեռուստասերիալը:

Ավելորդ չենք համարում նշել, որ Ռոգի Վարդը, բացի թատրոնում եւ կինոյում խաղալուց, զբաղվել է նաեւ բարեգործությամբ: Նա իր տանը հաճախ աճուրդներ եւ ճաշկերույթներ էր կազմակերպում, հրավիրում հայտնի ու հարուստ փարիզցիների: Վաճառում էր իր տան արժեքավոր կայքը (թանկարժեք սպասք, արծաթեղեն, հայտնի նկարիչների գործեր եւ նույնիսկ իր զգեստները) եւ ողջ հասույթը նվիրաբերում մանկատներին ու հիվանդանոցներին, օժանդակում ծնողազուրկ մանուկներին: Ի դեպ, Ռոգին սեփական երեխաներ չի ունեցել:

1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո նա իր ամուսնու՝ Պիեռ Բադելի հետ մեծ գումար է նվիրաբերում Չայաստանին: Սակայն դերասանուհու կարծիքով՝ վեցամիշ թիվ կազմող այդ գումարը բավարար չէր, եւ նա Շառլ Ազնավուրի եւ ժորժ Գարվարեցիի հետ համատեղ մի քանի երգ է ձայնագրում եւ դրանցից ստացված հասույթը փոխանցում հայրենիք:

«Բազում մարդիկ մնացել էին առանց հացի ու տանիքի, եւ նրանց պարզապես անհրաժեշտ էր այս օգնությունը: Վստահ եմ, որ մենք հիմա էլ կհարատեւենք: Չէ որ իմ ազգը բազում փորձություններ է հաղթահարել», – ասել



է մեծ դերասանուհին մի հեռուստազրույցի ժամանակ:

Իր նվաճումների համար Ռոգի Վարդն արժանացել է երկու հայտնի՝ «Պատվո լեգեոնի շքանշան» եւ Բեռլինի կինոփառատոնի «Ոսկե արջ» մրցանակների: Ակնառու դերասանուհին իր մահկանացուն կնքեց 2012 թ.: Փարիզցիներն այդպես էլ երբեք չմոռացան հայազգի դերասանուհու կանացի հմայքն ու անմոռանալի ժպիտը:

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՋԵՌՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Սկիզբը՝ էջ 5

Պետք է գիտենալ, որ ներկա 552 թվականի դեկտեմբերի 31-ին Լուսինը եղել է 30 օրական (այսինքն՝ վերադիրը 0 է), որն էլ դարձել է հաջորդ՝ 553 թվականի կամ այլ կերպ ասած՝ Շ-յակ առաջին թվականի վերադիրը: Հուլյան տոմարում վերադիրներն ունեն հաստատուն արժեք յուրաքանչյուր 19-ամյակում՝ տարիների կտրվածքով, եւ ամեն 19 տարին մեկ կրկնվում են նույնությամբ, այսինքն՝ Հուլյան տոմարում վերադիրների համակարգն ունի 19-ամյա պարբերականություն: Հարկ է նշել

նաեւ, որ Անանիա Շիրակացին Շ-յակի հռոմեացոց շարքը կազմելիս օգտվել է հռոմեական փոքր կամ հռոմեա-բյուզանդական վերադիրների համակարգից: Մեծանուն տոմարագետ Անանիա Շիրակացին թեւեւ հնգյակի ու վեցյակի արժեքները դրել է ապրիլի 2-ի լրման տարուց (ներկա 554 թվական), բայց վերադիրների համակարգն սկսել է 19-երյակի առաջին տարուց, այն է՝ ապրիլի 4-ի լրման տարուց (ներկա 562 թվական). այն Շ-յակի հաշվման իմաստով 10-րդ տարին էր: Այստեղ վերադիր արժեքը Թ (9) է: Շիրակացին ամեն հաջորդ տարում ավե-

լացրել է 11, իսկ 19-երյակի 10-րդ տարում (ներկա 571 թվական) ավելացրել է 12: Նշյալ տարին Շ-յակի հաշվման իմաստով վերջին տարին էր (տե՛ս Վարդանյան Ռ., Անանիա Շիրակացու (Շիրակունտ) համարողի ՀԼՔ կարգը, էջ 235): Շ-յակի՝ հաշվման իմաստով վերջին տարում վերադիր արժեքը մեկով ավելացնելն ուներ կարեւոր պատճառ եւ նպատակ, այն է՝ արեւային եւ լուսնային տարիների հավասարվելը:

Շարունակելի

ԳՈՐԾ ԳԱՆՏՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱՐԱՆԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Չայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517 197
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 30.08.2019 թ.
Տպաքանակը՝ 1175